



## ՀԱՆՐԱՅԻՆ ՀԵՌԱՐՁԱԿՈՂԻ ԽՈՐՀՈՒՐԴ

### Ո Ր Ո Շ ՈՒ Մ

24 հոկտեմբեր, 2023 թվականի № 65-Լ

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՅԻՆ ՀԵՌՈՒՍՏԱԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ  
ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԳՈՒՅՔԻ ՇՈՒԿԱՅԱԿԱՆ ԱՐԺԵՔԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեսալսողական մեդիայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 24-րդ հոդվածի 1-ին, 2-րդ, 4-րդ և 5-րդ մասերով, 26-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով, 27-րդ հոդվածի 1-ին մասի 15-րդ կետով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 1-ին հոդվածի 2-րդ մասով, «Բաժնետիրական ընկերությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 59-րդ հոդվածի 2-րդ մասով, 84-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետով, «Հայաստանի հանրային հեռուստաընկերություն» փակ բաժնետիրական ընկերության (այսուհետ՝ «Ընկերություն») կանոնադրությամբ, հիմք ընդունելով Ընկերության գործադիր տնօրենի 2023 թվականի հոկտեմբերի 17-ի N Հ.Մ./02-264/23 գրությունը և հաշվի առնելով Հանրային հեռարձակողի խորհրդի 2023 թվականի սեպտեմբերի 22-ի № 59-Լ որոշման համաձայն կատարված գնահատման արդյունքում անկախ գնահատողի («Երևանի ապրանքային բորսա» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն) կողմից ներկայացված Ընկերության գույքի շուկայական արժեքի գնահատման 2023 թվականի հոկտեմբերի 13-ի № 23/30 հաշվետվությունը՝ Հանրային հեռարձակողի խորհուրդը **ո ր ո շ ու մ է.**

1. Հանրային հեռարձակողի խորհրդի 2023 թվականի սեպտեմբերի 22-ի № 59-Լ որոշմամբ նախատեսված՝ Ընկերությանը պատկանող գույքի շուկայական արժեքները սահմանել համաձայն սույն որոշման հավելված 1-ի:

ՀԱՆՐԱՅԻՆ ՀԵՌԱՐՁԱԿՈՂԻ

ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ

24 հոկտեմբեր, 2023 թվականի

ք. Երևան

Ա. ՇԻՐԻՆՅԱՆ